ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սահմանադրական դատարանի կարիքների համար ավտոմեքենայի շարժիչի յուղի գնման 10.04.2017թ. թիվ 7 պայմանագրի՝ տեխնիկական պատճառներով ուշացումով մուտքագրումը գնումների էլեկտրոնային համակարգ, չի անդրադարձել գնման նորմալ ընթացակարգի վրա:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Ա - 301
25.05.2017

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Թիվ7

ք. Երևան «10 Ապրիլի 2017թ

<<Եռյակ>> ՍՊԸ-ն, այսուհետ՝ ՄԱՏԱԿԱՐԱՐ, ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Սահակյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՀՀ Սահմանադրական Դատարան >>,այսուհետ՝ԳՆՈՐԴ, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ա.Հակոբյանի,որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 ՄԱՏԱԿԱՐԱՐԸ պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետում ԳՆՈՐԴԻՆ հանձնել, իսկ ԳՆՈՐԴԸ պարտավորվում է ընդունել Multivis 10W40 շարժիչի յուղը, այսուհետ՝ ապրանքներ, և վճարել դրանց համար:

1.2 Մատակարարման ենթակա ապրանքների անվանացանկը, քանակը, գինը և առաքման ժամկետն որոշվում է հավելված թիվ 1-ով, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 ՄԱՏԱԿԱՐԱՐՆ ապրանքը մատակարարում է ԳՆՈՐԴԻՆ պատվերն ստանալուց և երեք աշխատանքային օրվա ընդացքում 100% ապրանքի դիմաց գումարի փոխանցումը ապպահովելուց հետո համաձայն 2.2 կետի:

2.2 ՄԱՏԱԿԱՐԱՐՆ ապրանքը մատակարարում է ԳՆՈՐԴԻ կողմից պատվերն ստանալու պահից՝ 60 օրվա ընթացքում:

2.3 Մատակարարման օր է համարվում ապրանքը ԳՆՈՐԴԻՆ հանձնելու օրը, իսկ առաքման՝ հաշիվ-ապրանքագրի ձևակերպման օրը:

2.4 Ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ԳՆՈՐԴԻՆ՝ առաքման օրվանից:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 ՄԱՏԱԿԱՐԱՐՆ իրավունք ունի՝

3.1.1 Պահանջել ԳՆՈՐԴԻՑ վճարելու այն ապրանքի համար՝

- որը ԳՆՈՐԴԸ առանց սույն պայմանագրով սահմանված հիմքերի չի ընդունում կամ հրաժարվում է ընդունել;
- որը ԳՆՈՐԴԸ չի ընդունում սույն պայմանագրով սահմանված ժամկետներում:

3.2 ՄԱՏԱԿԱՐԱՐԸ պարտավոր է՝

3.2.1 ԳՆՈՐԴԻՆ հանձնել պայմանագրով հավելվածում որոշված տեսականու ապրանքներ:

3.2.2 ԳՆՈՐԴԻՆ հանձնել սույն պայմանագրին համապատասխան որակի ապրանք:

3.2.3 Մատակարած ապրանքի հետ միաժամանակ հանձնել ԳՆՈՐԴԻՆ դրանց վերաբերյալ փաստաթղթերը՝

- հաշիվ-ապրանքագիր
- որակի սերտիֆիկատ (անալիտիկ սերտիֆիկատ)

3.2.4 Մատուցել ԳՆՈՐԴԻՆ հատուկ խորհրդատվական ծառայություն մատակարած ապրանքի ճիշտ կիրառելիության՝

4. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ և ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1 Ապրանքն ընդունելու ժամանակ ԳՆՈՐԴՆԸ ստուգում է դրա համապատասխանությունը առաքման և ապրանքն ուղեկցող այլ փաստաթղթերում նշված տվյալներին (նեռարյալ՝ սույն պայմանագիրը և պատվերը)՝ ըստ անվանացանկի, քանակի, որակի և տեսականու:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 ՄԱՏԱԿԱՐԱՐԸ, մատակարարման ժամկետները խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար ԳՆՈՐԴԻՆ վճարում է տույժ՝ ապրանքի արժեքի 0.1 % չափով, բայց ոչ ավել քան 10%:

5.2 Մատակարած ապրանքի համար ժամանակին չվճարելու դեպքում՝ ՄԱՏԱԿԱՐԱՐԸ իրավասու է գանձել ԳՆՈՐԴԻՑ չվճարած գումարի, կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0.1% տույժ, բայց ոչ ավել քան 10%:

6. ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

7.2 Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծվում են ՀՀ օրենսդրության սահմանված կարգով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև 01 հունվարի 2017թ:

8.2 Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր և ստորագրված են երկկողմանի:

8.3 Կողմերի համաձայնության դեպքում պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարացվել:

9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՄԱՏԱԿԱՐԱՐ
Եռյակ ՍՊԸ
Հասցե. Երևան,Կորյունի 1/12
ՀՎՀՀ 01523512
Հ/Հ20517220516810 01
Ինեկոբանկ ՓԲԸ

Գլխավոր Տնօրեն _____ Ա.Ասահակյան
(ստորագրություն)

Կ.տ.

ԳՆՈՐԴ
ՀՀ Սահմանադրական Դատարան
Հասցե.ք,Երևան,Բաղրամյան 10
ՀՎՀՀ00018357
Հ/Հ900011179083
Երևանի թիվ 1 ՏԳԲ

Աշխ. դեկավար _____
Ա.Հակոբյան
(ստորագրություն) (Ա.Ա.)

Կ.տ.

Հավելված թիվ 1

«10 » _Ապրիլի_____ 2017թ

ԱՆԿԱՆԱՑԱՆԿ

մատակարարման ենթակա ապրանքների

Անվանում	Տեսակ	Գինը (դրամ)	Քանակ (Լ)	Գումար (դրամ)
1.Շարժիչի յուղ	Multivis 10W40	2166.67	230	498333.34
		Ընդամենը:		498333.34
♦ գումարը վճարվում է դրամով		ԱԱՀ		99666.66
Հինգ հարյուր իննսունութ հազար ՀՀ դրամ		Ընդհանուր գումար:		598000

ՄԱՏԱԿԱՐԱՐ
Եռյակ ՍՊԸ
Հասցե. Երևան,Կորյունի 1/12
ՀՎՀՀ 01523512
Հ/Հ20517220516810 01
Ինեկոբանկ ՓԲԸ

Գլխավոր Տնօրեն Ա.Սահակյան
(ստորագրություն)

Կ.տ.

ԳՆՈՐԴ
ՀՀ Սահմանադրական դատարան
Հասցե.ք,Երևան,Բաղրամյան 10
ՀՎՀՀ00018357
Հ/Հ900011179083
Երևանի թիվ 1 ՏԳԲ

Աշխ. ղեկավար Ա.Հակոբյան
(ստորագրություն)

(Ա.Ա.)

Կ.տ.